


ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ

Ինչո՞ւ կը կատղիս բնութեանդ դէմ, ո՛վ մարդ: Անոր դէմ, որ կը գայրանաս նոյն բնութեանդ ընկերը չէ՞: Օտարը եւ թշնամին ձգած սիրելիին եւ բարեկամի՞ն կը բարկանաս: Միթէ անդամդ, մանաւանդ Քրիստոսի անդամը անպատուած, թշնամած, նենգած չե՞ս ըլլար այս ձեռով, «Որովհետեւ ամէնք ալ Անոր մարմինին անդամներէն ենք, նոյն մարմինէն եւ ոսկորներէն» (Եփես. 5.30): Եղբորդ դէմ ըրած լուտանքդ Անոր կը բարձրանայ, համաձայն այն խօսքին որ ըսաւ. «Ան, որ ձեզ անարգէ զիս անարգած կ'ըլլայ» (Ղուկ. 10.16): Ահաւասիկ յայտարարեց, թէ ան որ իր եղբայրը նախատէ զԱստուած թշնամացած կ'ըլլայ: Բարկութիւնը մեր բնութենէն դուրս՝ չարին հնարքն է, որ մեզի կը վնասէ եւ մեծապէս կը տառապեցնէ եւ մենք միշտ անոր ետեւէն կ'երթանք: Արդարեւ, ի՞նչ բան մեր մէջ աւելի սաստիկ կիրք է քան նախատելը եւ նախատուիլը, անպատուելը եւ անպատուելիլը, ատելը եւ ատուիլը, գարնելը եւ գարնուիլը, տրտմեցնելն ու տրտմիլը, բամբասելն ու բամբասուիլը: Ահա ասոնք են գործերը բանասարկուին եւ երաշխիքները անդեմական տանջանքներուն: Իսկ Քրիստոսի պատուիրանները դիւրին են ու հեշտացուցիչ, եւ մարմնաւոր կեանքի մէջ արքայութեան հանգիստը կը պարգեւեն, որովհետեւ ի՞նչ բան աւելի բարի է քան հեշտալին՝ քան սիրուիլը, բարեբանելն ու բարեբանուիլը եւ ամէնուն բարեկամ ու փարելի ըլլալը:

ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՊԼՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ


2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հասած է սրբագործման անճառելի պահը, խաղաղութիւնը իջած է երկիր, հաւատացեալներ Քրիստոսի անունով սիացած են եւ եղբայրացած, աստուածային սէրը համակած է հաւատացեալները հրեշտակներ երկինքէն երկիր իջնելով եւ անաւել նուիրագործած են պահը, եւ կարծէք Վերջին Ընթրիքի Սեղանն է, որ կը բացուի հաւատացեալներուն առջեւ: Քրիստոս պատարագիչ եւ պատարագեալ՝ Ս. Սեղանին վրայ է: Ինքն է, որ կ'ընծայէ, Ինքն է, որ կ'ընծայուի ժողովուրդին, ինչպէս կ'ըսէ Ս. Պատարագի խորհրդատետրը.- «Որովհետեւ զորն եւ թէ՛ մատուցանողը եւ թէ՛ մատուցողը, թէ՛ ընդունողը եւ թէ՛ տուողը... զորն ինքնը եւ քաշտողը, եւ նոյն ինքնը մեզի կը քաշտուի միշտ, առանց սպառելու...»:

Պատարագիչ քահանան՝ փոխանորդաբար պատարագուող...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՂՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒՆԻՍ 2024

ԹԻՒ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ 58.13-59.7: Ա. ՏՄ 4.12-5.10: ՅԻ 3.13-21

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 3. 13-21

Ոչ ոք երկինք ելաւ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ որ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին ՀՀաւատալուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է. Հոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով, որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն, ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

\*\*\*\*\*


ԱՌԱԿ (Գ. 27-33)

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար: Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկու՛ր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ի՞նչ կը պատահի քեզի: Զարիք մի՛ նիւթեր բարեկամիդ դէմ, որ քեզի ապաւինած է եւ յոյսը վրադ դրած:

Զուր տեղ մի՛ թշնամանար մարդուն հետ, որպէսզի քեզի չարիք չպատճառէ: Զարագործ մարդոց անարգ գործեր մի՛ որդեգրեր եւ մի՛ նախանձիր անոնց ընթացքին, որովհետեւ անօրէնը պիղծ է Տիրոջ առջեւ եւ չի հաղորդակցիր արդարներուն: Ամբարիշտներուն տունները անէծքով լեցուն են, միչդեռ արդարներուն տունները՝ օրհնութեամբ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՍՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԱԹԱՆԱՍԻ ԵՒ ԿԻՐԵՂԻ



### Ս. ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՄԵՏ

Քրիստոնեական եկեղեցւոյ մեծագոյն հայրերէն մէկն է Աթանաս Աղեբսանդրացի հայրապետ: Ծնած է Աղեբսանդրիա՝ 296 թուականին, ուր նաեւ շարունակած է իր ուսումը աստուածաբանական հոշակաւոր համալսարանին մէջ:

Ան որպէս քարտուղար սարկաւազ Աղեբսանդրիոյ պատրիարքին, ներկայ կ'ըլլայ Նիկիոյ ժողովին: Ապա յաջորդելով անոր՝ 328 թուականին, եռուն պայքար կը բանայ Արիոսականութեան դէմ, անհամար նամակներ գրելով Արիոսականութեան յարած եպիսկոպոսներուն: Իր ունեցած հակաարիոսական կեցուածքին համար հինգէ աւելի անգամներ կ'աքսորուի եւ պաշտօնագուրկ կ'ըլլայ:

Ի վերջոյ յաղթական դուրս կու գայ եւ մինչեւ իր վախճանը՝ 373 թուականին, կը մնայ Աղեբսանդրիոյ աթոռին վրայ եւ կը պաշտպանէ քրիստոնեական ուղղափառ հաւատքը կառչած մնալով Նիկիական հանգանակին:

### Ս. ԿԻՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՏԱՅԻ

Կիրեղ եղած է քրիստոնեական եկեղեցւոյ նշանաւոր հայրերէն մէկը, բայց իր մասին տեղեկութիւններ կը պակսին: Ծնած է 315 թուականին եւ Երուսաղէմի աթոռին վրայ պատրիարք ընտրուած՝ 349 թուականին: Իր գահակալութեան ընթացքին, բազմիցս կ'աքսորուի արիոսական աղանդաւորներուն կողմէ, որոնք այն ժամանակ լեցուած էին Երուսաղէմի մէջ, բայց ի վերջոյ 378 թուականին վերջնականապէս կը վերահաստատուի իր աթոռին վրայ եւ 381 թուականին կը մասնակցի Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուած եկեղեցւոյ Տիեզերական երկրորդ ժողովին: Ապա 386 թուականին բնական մահով կը վախճանի:

Իր գործերէն նշանաւոր է «Կոչումն Ընծայութեան» գիրքը, որ հինգերորդ դարուն հայերէնի ալ թարգմանուած է: Զափահասներու Մկրտութեան նախապատրաստող հոյակապ գործ մըն է ասիկա:

### ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

#### Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄԵՐԵԱՅ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը երեխան 40-րդ օրը տաճար կը տանի, ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղեւտ. 12.6-8): Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ի՛նքն է՝ Հին Ուխտի Եկեղեցիին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ: Այդ պատճառաւ, Նոր Ուխտի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն:

### Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

#### ԱՐԱՐԻՉ ԵՒ ԱՐԱՐԱՃՆԵՐ ՄԻԵՒՆՈՅՆ ՄԱՅՐԸ ՈՐՆԵՐ

Աստուածամօր վերափոխումը, որ տեղի ունեցաւ իր ննջման երրորդ օրը, անոր մարմնաւորապէս երկինք փոխադրուելուն տօնն է: Երկինք եւ երկնային մարմիններ մեծապէս ցնծացին, երբ տեսան իրենց Արարիչին մայրը մուտք կը գործէր երկինք: Յնձացին եւ ուրախացան, որովհետեւ մայր չունէին եւ մայր ունեցան: Գորովի եւ գթութեան մայր, սիրելի ու սիրող մայր:

#### ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

#### Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Դ Ա Ս Ը

Երկինքը ունէր զԱստուած իբրեւ հայր, բայց չունէր մայր: Աստուած կամեցաւ, որ երկինք եւ երկնային մարմիններ ունենան մայր, եւ անոնք ունեցան սուրբ Կոյսը իբրեւ մայր: Մայր: Որքա՛ն գեղեցիկ բառ: Այնքան գեղեցիկ, որ Աստուած անգամ փափաքեցաւ զայն առնել իր շրթներուն վրայ: Աստուած տեսաւ, թէ որքան փափաքելի ու անոյշ է մայր ունենալը, մամա ըսելը եւ ուզեց, որ ինքն ալ մամա ունենայ: Եւ ընտրեց Մարիամը իբրեւ իր մայրը, զայն դարձնելով բոլորիս մայրը: Փա՛ռք Յիսուսին, յաւիտենականութեան մէջ մենք պիտի չմնանք առանց մօր:

### ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

#### ԵՐԲ ՄԵՂՔԵՐՈՒՂ ԿԸ ԳԻՏԱԿՅԻՍ ԵՒ Կ՛ՈՒԶԵՍ ԽՈՍՏՈՎԱՆԻ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 32

Երանի՛ անոր, որուն յանցանքները թողութիւն գտան, որուն մեղքերը ներուեցան: Երանի՛ այն մարդուն, որուն մեղքը Տէրը նկատի չառնէր, որուն հոգիին մէջ նենգութիւն չկայ: Որքան ատեն, որ մեղքերս չխոստովանեցայ, ոսկորներս մաշեցան օրն ի բուն աղաղակելէն: Գիշեր ցերեկ հարուածներ տեղացուցիր իմ վրաս, Տէ՛ր, եւ իմ ոյժս խամրեցաւ, ամբան տաքէն չորցած խոտի պէս: Մեղքս քեզի յայտնեցի, անօրէնութիւնս չժածկեցի: Ըսի՝ «Տիրոջ խոստովանիմ յանցանքներս», եւ դուն ներեցիր մեղքս, ու ջնջեցիր պատիժս: Ասոր համար աստուածապաշտ ամէն մարդ աղօթքով պիտի դիմէ քեզի ամէն անգամ, որ անդրադառնայ, թէ մեղքի մէջ կը գտնուի եւ վիշտերը նոյնիսկ, եթէ հեղեղի պէս զինք ողողեն, բնաւ պիտի չկարենան մօտենալ իրեն: Դո՛ւն ես ապաստանարանս: Զիս ներութենէ զերծ կը պահես, եւ ազատութեան երգերով կը շրջապատես:

Քեզի պիտի տրվեցնեմ,- կ'ըսէ Տէրը,- ցոյց պիտի տամ, թէ ինչ ճամբով պէտք է երթաս պիտի խրատենք քեզ, եւ աչքս քու վրայ պիտի ըլլայ:

#### ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԿԱՆՔ